



ՈՐՄ բողոքել:



Կան բազմաթիվ եղանակներ, որոնց միջոցով կարող եք ստանալ օգնություն հեռախոսային ծառայության կամ հաշիվների հետ կապված, օրինակ՝

- Կապվեք ձեր հեռախոսային ընկերության հետ
- Կապվեք Կալիֆոռնիայի հանրային կոմունալ ծառայությունների հանձնաժողովի հետ
- Կապվեք Դաշնային հաղորդակցության հանձնաժողովի հետ

Խնդիր հայտնաբերելու դեպքում դիմեք ձեր հեռախոսային ընկերությանը օգնության համար:

Եթե խնդիր ունեք ձեր հեռախոսային ծառայության կամ հաշվի հետ, հնարավորինս շուտ կապվեք ձեր հեռախոսային ընկերության հետ՝ խնդիրը լուծելու համար:

- Չանգահարեք հեռախոսային ընկերության հաճախորդների սպասարկման անվճար համարին կամ կապվեք նրա հաճախորդների սպասարկման կենտրոնի հետ ինտերնետի միջոցով, եթե հնարավոր է:
- Եթե հաճախորդների սպասարկման ներկայացուցիչի հետ չեք կարողանում լուծել խնդիրը ձեր գոհունակությամբ, խնդրեք կապվել ղեկավարի հետ: Ավելի բարձր մակարդակի աշխատակիցը կարող է ավելի շատ լիազորություններ ունենալ ձեր խնդիրը լուծելու համար:

Հիշեք, որ երբեմն կարող է մի քանի րոպե պահանջվել, մինչև կապ հաստատեք իրական աշխատակցի հետ հեռախոսային ընկերությունում, ուստի զանգահարեք այն ժամանակ, երբ շտապելու կարիք չունեք:

Դիմեք Կալիֆոռնիայի հանրային կոմունալ ծառայությունների հանձնաժողովին, եթե ձեր հեռախոսային ընկերությունը չի օգնում ձեզ

Եթե դուք կապվել եք ձեր հեռախոսային ընկերության հետ, և այն չի օգնել ձեզ ձեր խնդրի լուծման հարցում, կարող եք բողոք ներկայացնել Կալիֆոռնիայի հանրային կոմունալ ծառայությունների հանձնաժողովի սպառողների հարցերով զբաղվող բաժին: Կալիֆոռնիայի հանրային կոմունալ ծառայությունների հանձնաժողովը կարող է օգնել ձեզ հեռախոսային ծառայության կամ հաշվի վերաբերյալ բողոքների հարցում, ներառյալ ցանկացած վճար, որը դուք չեք թույլատրել, կամ եթե ձեր հեռախոսային ծառայությունը փոխանցվել է մեկ այլ հեռախոսային ընկերության՝ առանց ձեր համաձայնության: Դուք կարող եք կապվել Կալիֆոռնիայի հանրային կոմունալ ծառայությունների հանձնաժողովի հետ հեռախոսով, ինտերնետի միջոցով կամ փոստով:

- Զեռախոսով՝ 1-800-649-7570
- Անցանց՝ <https://ia.cpuc.ca.gov/cimsapp/>
- Փոստով՝ Կալիֆոռնիայի հանրային կոմունալ ծառայությունների հանձնաժողովի սպառողների հարցերով զբաղվող մասնաճյուղ, Վան Նես պողոտա, 505. Սան Ֆրանցիսկո, Կալիֆոռնիա 94102

շարունակությունը հետևի մասում



California Public Utilities Commission

Վան Նես պողոտա, 505
Սան Ֆրանցիսկո,
Կալիֆոռնիա 94102

800-848-5580 (անվճար)
cpuc.ca.gov



Ու՛մ բողոքել:

շարունակությունը առջևից




Դիմեք այլ գործակալությունների օգնությանը, եթե Կալիֆոռնիայի հանրային կոմունալ ծառայությունների հանձնաժողովը չի կարող օգնել ձեզ

Եթե ձեր հեռախոսային ընկերությունը և Կալիֆոռնիայի հանրային կոմունալ ծառայությունների հանձնաժողովը չեն կարողացել օգնել ձեզ, կարող եք կապվել Դաշնային հաղորդակցության հանձնաժողովի հետ, եթե կասկածներ ունեք այլ նահանգից կամ դեպի այլ երկիր կատարված զանգերի վերաբերյալ: Դուք կարող եք կապվել Դաշնային հաղորդակցության հանձնաժողովի հետ՝

- Էլեկտրոնային փոստով՝ fccinfo@fcc.gov
- Անցանց՝ www.fcc.gov/cgb/complaints.html
- Փոստով՝ Սպառողների և կառավարության Դաշնային հաղորդակցությունների հանձնաժողով Գործերի բյուրո 445 12-րդ փողոց, Ջարավ-արևմտյան Վաշինգտոն, Կոլումբիայի շրջան 20554
- Ֆաքսով՝ 1-866-418-0232
- Հեռախոսային ձայնային կապով՝ 1-888-225-5322
TTY հեռատալիչ սարքով՝ 1-888-835-5322

Նախքան ձեր հեռախոսային ընկերությանը դիմելը, պատրաստված եղեք: Հավաքեք ձեր հաշիվները, անդորրագրերը կամ ցանկացած այլ բան, որին կարող եք հղում կատարել, և մի մոռացեք գրել, թե երբ եք կապվել ընկերության հետ, ում հետ եք խոսել և ինչ է համաձայնել անել այդ անձը:

CBO կոնտակտային տվյալներ՝



TELECOMMUNICATIONS EDUCATION AND ASSISTANCE IN MULTIPLE LANGUAGES
A PROGRAM OF THE CALIFORNIA PUBLIC UTILITIES COMMISSION



California Public Utilities Commission

Հեռահաղորդակցության
կրթություն և Օգնություն
բազմաթիվ լեզուներով

(TEAM) ծրագիր

www.cpuc.ca.gov/team-and-changes

teamandchanges@cpuc.ca.gov

Եթե չեք կարողանում լուծել ձեր վեճը
ձեր ծառայություն մատուցողի հետ,
կապվեք ձեր TEAM CBO հետ: